

Ս. Ս. Փառայան

ՍՎԵԴԻԱՅԻ ԲԱՐԲԱՌԻ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սվեդիայի բարբառը հայ բարբառներից ամենադժվար հասկանալի, գրականից ավելի շատ հեռու կանգնած, իր մեջ ամենից շատ զրարարյան տարրեր ունեցող բարբառներից մեկն է։

Հ. Ս. էփրիկյանը իր քնաշխարհիկ բառարանում պատմական Անտիոք քաղաքի մասին խոսելիս՝ վերջում ավելացնում է հետևյալը. «Անտիոքայ դառնակին մեջ գտնուող գիւղերն՝ հեռանալներուն՝ Պիթաղ (իմա Բիթիաս—Ա. Փ.), Եօղուն Օլուխ (իմա Յողուն Օլուխ), Խրտըրբէկ, Քեպուսի (իմա Փարուսի), կան 1200 տուն հայք, որոնք զրարարի ոճով հին հայերեն մը կը խօսին»։

Բարբառագետը, երբ հետազոտում է Սվեդիայի բարբառը, իսկույն նկատում է այնտեղ բերականական բաղմաթիվ կարգերի տարբերություններ, ուշադրավ և հետաքրքրի առանձնահատկություններ։

Մեր սույն հոդվածով տալիս ենք Սվեդիայի բարբառի ձևաբանության ամենահիմնական առանձնահատկությունների համառոտ նկարագիրը։

Գոյականների բիվր

Սվեդիայի բարբառում որոշ գոյականներ ունեն երեք՝ եզակի, երկակի և հոգնակի թիվ։

Երկակի թվին են պատկանում մարմնի բոլոր այն մասերը, որոնք քնականորեն զույգ են. օրինակ՝ աչք, ալանջ, քիթ (ոունդ իմաստով), հոնք, թուշ, ձեռք, ոտք, ծունկ, կրունկ, ուս և այլն։ Սույն բառերը երկակի թվում ստանում են Վաճ մասնիկը, որը միջին հայերենի Վժռ-ի (ուի, իի) հնչյունափոխված ձևն է։ Երկակի թվին պատկանող գոյականներն ունեն նաև իրենց հոգնակին, որոնք երկու տեսակ են՝ սովորական և հավաքական։ Բ՛են՝ երկակի և Թ՛են՝ հոգնակի թվերում որոշյալ և անորոշ առումները զգալիորեն տարբերվում են միմյանցից։ Օրինակ՝

Վրդ<ոտն. անորոշ առումով երկակին՝ վրդվա, իսկ որոշյալ առումով՝ վրդվէն (երկու ոտքը)։ սովորական հոգնակին՝ վրդվրնա ոտքեր, իսկ որոշյալ առումով՝ վրդվրնէն<ոտքերը։

Երկրորդ ձևի հոգնակին՝ վրդվաք—վրդվաքր։

Ծառ<ձեռն. երկակին՝ ծառվա—ծառվէն, հոգնակին՝ ծառվրնա—ծառվրնէն, երկրորդ ձևի հոգնակին՝ ծառվաք—ծառվաքր։

Ազանջ<ականջ. ազրնջվա—ազրնջվէն. հոգնակին՝ ազրնջնա—ազրնջնէն. երկրորդ ձևի հոգնակին՝ ազրնջվունք—ազրնջվունքր։

Զօնդ<ծունկն. երկակին՝ ձրնդվա—ձրնդվէն. հոգնակին՝ ձրնդնեռ—ձրնդնիրը. երկրորդ ձևի հոգնակին՝ ձրնդվաք—ձրնդվաքր և այլն։

Երկակի թվին պատկանող գոյականների ուղղական և հայցական, սեռական և տրական հոլովները չեն տարբերվում միմյանցից, եթե յրանք որոշյալ առումով են զործածվում խոսակցության մեջ։ Օրինակ՝

ուղղական հոլովով՝ վրդվէն գու ցավաւ—ոտքերը ցավում են։

հայցական հոլովով՝ վրդվէն դուլվանօ—ոտքերը լվանում է։

սեռական հոլովով՝ վրդվէն ուղղը իշէ—ոտքերի աղտը նայիր։

տրական հոլովով՝ վրդվէն ճօր ֆիտիցուվ—ոտքերին ջուր թափվեց։

1 Հ. Ս. էփրիկյան, Պատկերազարդ քնաշխարհիկ բառարան, պրակ երկրորդ, Վենետիկ, 1900, էջ 215։ Հ. Ս. էփրիկյանը չի հիշատակում Վազրֆ գյուղը և մյուս գյուղակները։

2 Սվեդիայի բարբառում զործուն հանգամանք ունի բաղաձայնությունը. գու ցավա-ի փոխառեն պետք էր լինե՛ր՝ գու ցավէն։ Բերված մյուս օրինակներում էլ նույն երևույթն է։

Երկակի թվին պատկանող զոյականները «նիր» հոգնակերտ մասնիկ են ստանում այն ժամանակ, երբ առարկան ունի փաղաքշական կամ նվաղական իմաստ: Օրինակ՝ վրդվա—երկուստք, իսկ վրդվինիր—սիրուն և փոքրիկ ոտքեր (մանկական ոտքեր):

«Վա» երկակի թվի մասնիկը դառնում է «վի» և ապա ստանում է «նիր» մասնիկը, որը համապատասխանում է գրական (աշխարհարար) հայերենի «ներ» մասնիկին: Օրինակ՝

ազրնջվինիր—փոքրիկ կամ սիրուն ալանջներ

իշվինիր—փոքրիկ կամ սիրուն աշքեր

ծառվինիր—փոքրիկ կամ սիրուն ձեռքեր

քրնթվինիր—փոքրիկ կամ սիրուն քիթներ և այլն:

Երկակի և հոգնակի թվերի տարրերակությունը ավելի շատ նկատվում է, երբ զործածվում են դրանք ստացական դերանուններով: Օրինակ՝ Լմ վրդվէն (իմ ոտքերը)—միր վրդվրնէն (մեր ոտքերը), քէ վրդվէն (քո ոտքերը)—ծիր վրդվրնէն (ձեր ոտքերը), էր վրդվէն (իր ոտքերը)—իրինց վրդվրնէն (իրենց ոտքերը), և կամ ստացական ա, դ, ն հոգներով միայն: Օրինակ՝ վրդվէտ, վրդվէտ, վրդվէն—ոտքերս, ոտքերդ, ոտքերը. վրդվրնէս, վրդվրնէտ, վրդվրնէն—մեր ոտքերը, ձեր ոտքերը, իրենց ոտքերը:

Արեւմտահայ գրական լեզուն նույնպես ունի սրա յուրահատուկ ձևը՝ ոտքերնիս, ոտքերնիդ, ոտքերնին և այլն:

Փաղաքշական կամ նվաղական ձևի հոգնակին նույնպես լինում է սույն ձևով՝ վրդվինիրիս. վրդվինիրիտ, վրդվինիրը, այսինքն՝ ոտիկներնիս, ոտիկներնիդ, ոտիկներնին:

Հավաքական հոգնակիի համար սույն ձևը զործածական չէ:

Սվնդիայի բարբառը իր հոգնակերտ զործուն մասնիկներով ներկայանում է հայ բարբառներում որպես ամենահարուստներից մեկը: Դրանք երկու տեսակ են՝ հասարակ կամ սովորական հոգնակի և հավաքական հոգնակի:

Սովորական հոգնակերտ մասնիկներն են.

1. Իւ. գրական հայերենի եւ մասնիկն է. սույն մասնիկով հոգնակի են դառնում՝

ա) մեծ մասամբ միավանկ բառերը՝ քարիւր—քարեր, ճրրիւր—ջրեր, ձառիւր—ձառեր և այլն:

բ) Մի շարք երկվանկ և բազմավանկ բառեր, որոնք ունեն «էն» և «ուն» վերջավորությունը, նույնպես ստանում են «նիր» մասնիկը: Օրինակ՝

աղջիկ>աշգէն—աշգրնիր

ապարանջան>արըրջուն—արըրջնիր

արմազան>ըրմազուն—ըրմազնիր

տիկին>յըգէն, որը զործածական է միայն տալ և ներ զոյականների հետ. հոգնակին՝ դալ-յըգնիր, նիրդըգնիր:

գ) Այս բարբառում «ուկ» կամ «ակ» վերջավորությամբ արմատ բառեր, ձմերուկ>ծըմըրուկ—ծըմըրգիր, տոպրակ>տըրրուկ—յըրըրգիր, դաստառակ>տասյըրուկ—տասյըրգիր:

2. Նիր. աշխարհաբարի «ներ» հոգնակերտ մասնիկն է, որը հատուկ է երկվանկ կամ բազմավանկ բառերի համար: Սույն մասնիկով հոգնակի են կազմվում այն բառերը, որոնք ունեն նվաղական և փաղաքշական իմաստ: Օրինակ՝

առուակ>առվօգ—առվըգնիր

բարձիկ>պարծագ—պարծըգնիր

տնակ>դրնօդ—դրնինիր և այլն:

Երկակի թվին պատկանող զոյականները՝

աշք—իշվա, ալուկներ—իշվրնիր

ձեռն—ծառվա, ձեռիկներ—ծառվընիր

ոտն—վրդվա, ոտիկներ—վրդվինիր և այլն:

3. Նա. համապատասխանում է միջին հայերենի «նիր» հոգնակերտ մասնիկին: Սվնդիայի բարբառում ամենից շատ այս մասնիկով է կազմվում հոգնակին: Օրինակ՝ աման>ամուն—ամրնա, ալեռ>հալիւր—հալվրնա, աղբատ>ախքուդ—ախքուդնա և այլն:

4. Ա. կամ «աք», ունենք որպես օրինակներ՝ մարդ>մուրթ—մարթար (մարդիկ)

կին>ղէն (ախպրդէն—հղրդիկն), կանայք>ղաննար:

նաև բարբառում ու բաց վանկում բառերը: Օրինակ՝ ալոսայ>ազոս—ազոսաբ, ոստանայ>սոզանո—սոզանաբ, փնսայ>փիսո—փիսաբ, փնսացու>փիսացո—փիսացաբ և այլն:

5. Ք. գրաբարի սովորական հոգնակերտ մասնիկն է: Այս մասնիկով հոգնակի են կազմում այն բառերը, որոնք բաց վանկում ունեն ան Օրինակ՝ եկեղեցի>գիղիցա—գիղիցաբ, կաշի>գիշա—գիշաբ, կաղնի>ղաղնա—ղաղնաբ, մարի>մաբա—մաբաբ, տուի>դիլլա—դիլլաբ և այլն:

6. Վա. միջին հայերենի «վի» (ուի, ւի) հոգնակերտ մասնիկն է. բարբառումս երկակի թվի մասնիկն է: Բացի երկակի թվից, ծառայում է նաև մի շարք բառերի՝ որպես հոգնակերտ մասնիկ: Ակադեմիկոս Հր. Աճառյանը սույն վի մասնիկի մասին տալիս է հետևյալ բացատրությունը. «Քննությունները ցույց են տալիս, որ այս մասնիկը հայերենի հնագույն երկակի մասնիկն է (տես վերը) և ըստ այսմ վերի օրինակներն էլ նախկին երկակիներ են, այսպես՝ աշր, ձեռք, ոտք, մեջք, նմանապես և դուռ, որ դուրդ փեղկերով է. մյուսները նմանությամբ կազմված ձևեր են»³:

Ունենք մի քանի օրինակներ՝

զոգ>կուկ—կիկվա, դուռն>տոռ—տըրվա, էշ>իշ—իշվա, շուն>շոն—շընվա, խելք>խիլքվա: Սրանց որոշյալ առումով հոգնակին ևս լինում է երկակի թվի նման, այսինքն՝ վա-ն վերածվում է՝ վլն: Օրինակ՝ դուռն>տոռ, դռները—տըրվլն, էշ>իշ—էշեր—իշվլն և այլն:

7. Վաֆ. այս մասնիկով կազմվում է կրկնակի հոգնակի Օրինակ՝ իշվաբ (էշեր), շընվաբ (շներ), տըրվաբ (դռներ) և այլն:

8. Վունֆ. հավանաբար սույն մասնիկը առաջացել է վի-ունֆ միաձուլումից: Ունենք քիչ օրինակներ. ազընչվունք (ակտններ), կիշիրվունք (գիշերներ), լազըզվունք (լակտներ), իսդըրվունք (ոսկորներ), ուլըրվունք (ուտելիքներ), քըթըթվունք (քուրդեր, նաև՝ երեխայի լաթեր):

9. Դա<տա. միջին հայերենի տի մասնիկն է. սույն մասնիկով են կազմվում սովորաբար այն բառերը, որոնք ունեն «ուն» վերջավորությունը (ան>ուն): Օրինակ՝ եղան>իդուն—իդան-դա, խոնջան>խընջուն—խընջանդա, խողան>խիղզուն—խիղզանդա, պարան>բարուն—բարն-դա և այլն:

Սույն օրինակափությունից դուրս ունենք նաև մի քանի բառեր՝ ձաղղա (ծակեր), միղվը-րավղա (մեղվաբաղեր), սարղըզըղանդա (սարդի ոստաններ):

10. Տաֆ—տիբ, տի-բ միաձուլումով առաջացած կրկնակի հոգնակերտ մասնիկ. ունենք մի քանի օրինակ՝ սփապըրտաբ (եղբայրներ), ինդըրտաբ (րեկերներ), հուրքըրտաբ (հորաքույրներ), մուրքըրտաբ (մորաքույրներ):

11. Վրուաֆ—վըղաֆ. սույն մասնիկը միաձուլումն է վի-տի-բ մասնիկների. ունենք շատ քիչ օրինակներ՝ քուրվըղաբ (քույրեր), նիրվըղաբ (ներեր), դալվըղաբ (տալեր):

12. Անտա>անոա. սույն մասնիկը նույնպես միաձուլումով է առաջացել՝ ան-տի: Ունենք միայն երեք օրինակ. թիյանդա (թիեր), եզակին՝ թլն, կիդանդա (գյուղեր), եզակին՝ կիդ-ծիյանդա (ծիեր), եզակին՝ ծլն:

Հավաքական հոգնակերտ մասնիկներ

13. Սուունֆ. հին հայերենի ստանք մասնիկն է. «Հին հայերենի աստաճ տեղական մասնիկն է, որ վերածվել է հոգնակերտի: Անցումը կատարված է անշուշտ այգեստան, ձիթաստան, ծառաստան և նման բառերի վրայից, որոնց մեջ առարկաների բազմությամբ զտնվելու տեղը նույնիսկ բազմություն մտքով է առնված, որով և հավաքական է վերածված (Karst. 196)»⁴: Օրինակ՝ աղորստունք (ակոսներ), աղրստունք (աղիքներ), հիկկրստունք (հոգիներ), կուղրս-տունք (գոտիներ):

14. Տունֆ. հավանաբար տի-ունք մասնիկների միաձուլումով առաջացած. օրինակներ՝ պալընքտունք (բանալիներ), եղակին՝ պսլներ, հանղըցտունք (հանգույցներ), եղակին՝ հան-դայց, հավղըթտունք (հավկիթներ), եզակին՝ հավդայթ:

3 Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր 3-րդ, Երևան, 1957, էջ 709:

4 Նույն տեղում, էջ 713:

15. ՕճԲ կամ օճԲ. գրարարի «ունք» մասնիկն է. սույն հավաքական հոգնակերտ մասնիկով կան շատ բառեր: Օրինակ՝ ամբօնք (ամպեր), եզակին՝ ումբ, լիոոնք (լեռներ), եզակին՝ լիո-մադօնք (մատներ-մատունք), եզակին՝ մուդ, դիջօնք (տաճիկներ), եզակին՝ դիջադ և այլն:

16. ԻճԲ. գրարարի «ենք» մասնիկն է, սույն մասնիկը՝ զրվելով անձնանունների, մակ-անունների, ծածկանունների վրա, կազմում է դրանց հոգնակին և տալիս է գերղաստանի, ազգի, տոհմի իմաստ: Օրինակ՝ հիշիրինք (հաշերենք), Մարգիսինք (Մարկոսենք), Սարկիսինք (Սար-գիսենք), Վրթանիսինք (Վրթանեսենք) և այլն:

17. ՈւճԲ, նույն նշանակությամբ: Օրինակ՝ Ջանիգունք (ձանիկենք), հիշդունք (հաշի-կենք), Սուփգունք (Սուփրիկյանենք), Փաշիգունք (Փաշիկյանենք) և այլն:

18. Նէճ. այս բարբառի յուրահատուկ մասնիկներից է, գործածական է բայերի համար, երբ պրանք գործածվում են որպես փոխանուն: Օրինակ՝ Ուրթընէն ուկընէն միմը իղուվ—գնալներն ու գալները մեկ եղավ. այսինքն՝ նրանց գնալն ու գալը մեկ եղավ: Մըդընէն ու ընընէն միմը իղուվ—նրանց ներս մտնելն ու դուրս գալը մեկ եղավ և այլն:

Հ Ո Ւ Ո Վ

Ավեդիայի բարբառն ունի 7 հոլով, 10 հոլովում, հետևաբար 10 հոլովիչ: Դրանց դասա-կարգման ժամանակ նկատի ենք ունեցել եզակի թվի սեռական հոլովիչը: Նույն հոլովիչն ունե-ցող եզակի թվում գոյականները հոգնակի թվում ստանում են տարբեր-տարբեր հոլովակազմիչ-ներ:

Առաջին հոլովում. ունի երկու ձև: Առաջինն ունի «ը» հոլովիչը, երբ գոյականը անորոշ առումով է, օրինակ՝ ձառը դիրիվ է—ծառի տերն է, ցիրընը հուց է—ցորենի հաց է, ազը ձօր է—ականաղբյուրի ջուր է և այլն:

Երկրորդը՝ «էն» հոլովակազմիչով, երբ գոյականը որոշյալ առումով է: Օրինակ՝ ձառէն դիրիվը տիղնիցուվ—ծառի տերերը դեղնեց. ցիրընէն կէնը պանծըրցուվ—ցորենի գինը բարձ-րացավ: Բերենք ուրիշ օրինակ. Սարկիսը դրդօ—Սարգիսի տղա, այսինքն՝ Սարգիսի տղայի լնավորությունն ունեցող տղա, որը հայտնի է իր նկարագրի բացասական գծերով և այլն: Իսկ երբ ասում ենք՝ Սարկիսէն դրդան է—Սարգիսի տղան է, հայտնի է դառնում, որ մեր ծանոթ Սարգիսի տղան է:

Երկրորդ հոլովում. հոլովիչն է «օն», հավանաբար «ան» հոլովիչի հնչյունափոխված ձևն է, բայց համապատասխանում է «ուն» հոլովիչին: Օրինակ՝ իշշօն (իշու), ծիյօն (ծիու), թիյօն (թիու) և այլն: Հոգնակին՝ իշվուց, ծիյանգուց, թիյանգուց:

Երրորդ հոլովում. հոլովիչն է «ուն», համապատասխանում է «ան» հոլովիչին: Օրինակ՝ շուն<շան, դուն<տան, մրգուն<մկան, ծրդուն<ծկան և այլն: Հոգնակին՝ շընվուց, դընվուց, մրգունց, ծրգունց:

Չորրորդ հոլովում. հոլովիչն է «ուր», համապատասխանում է «որ» հոլովիչին: Օրինակ՝ ախպուր<եղբոր, մուր<մոր, հուր<հոր (գործածվում է միայն բառակազմության պարագա-յում՝ հուրքայր (հորաքույր), մուրքայր (մորաքույր), հոգնակին խառն է, եղբայրների>ախ-պրրտուցը, մայրերի>միրիրէն և այլն:

Հինգերորդ հոլովում. հոլովիչն է «ուն», համապատասխանում է «վա» հոլովիչին: Օրի-նակ՝ կիշըրվուն<գիշերվա, շապթըրվուն<շաքաթվա, դարվուն<տարվա և այլն: Հոգնակին՝ կիշըրվունց (գիշերների), շապթունց (շաքաթների), դարվուց (տարիների):

Վեցերորդ հոլովում. հոլովիչն է «վը», դարձյալ համապատասխանում է «վա» հոլովիչին: Օրինակ, ուրվը<օրվա, հոգնակին՝ ուրրունց. դարվը<տարվա (անորոշ առումով), ամսըվը<ամսվա (անորոշ առումով) և այլն:

Այս հոլովումը հատուկ է երկակի թվին պատկանող գոյականներին:

Յոթերորդ հոլովում. հոլովիչն է «ուշ», համապատասխանում է «ոջ»-ին: Օրինակ՝ տըրուշ<տիրոջ, հոգնակին՝ գիրիրէն:

դըկըրուշ<տագրոջ, հոգնակին՝ դըկրիրէն:

ըսկըսրուշ<կեսրայրոջ, հոգնակին՝ ըսկըսրիրէն և այլն:

Ուրեմուդ հոլովում. հոլովին է «ուց», համապատասխանում է «աց»-ին. օրինակ՝ իուց< աչաց, հոգնակին՝ իւվուց, ծառուց< ձևուաց, հոգնակին՝ ծառվուց, վրդուց< տաաց, հոգնակին՝ վրգվուց և այլն:

Իննեւորդ հոլովում. հոլովին է «ունց»: Օրինակ՝ կարունց (զարնան), իշունց (աշնան), Տասնեւորդ հոլովում. «ինց», համապատասխանում է «ենց»-ին, Օրինակ՝ Ավետիսինց< Ավետիսենց, Բիզիսինց< Պողոսենց, Դրրինց< Կրպոյենց և այլն:

Տրական հոլովը երկու ձևով է կազմվում. սովորական, որ նման է սեռականին և նախդիրով տրական, որը ուղղականի նման է, սկիզբը դրվում է ի կամ յ նախդիրը: Օրինակ՝ իզօն մուզզըցօ—տանը մոտեցա, յիրիսը իշէ—երեսին նայիր, Յողուն-Օլուկի խոսվածքում ի նախդիրը դառնում է ը: Օրինակ՝ ը ձառիրը մուզզըցու—ծառերին մոտեցա, թայ յանք կընուց—դեպի նրան գնաց և այլն:

Հայցականը որոշյալ առումով միշտ ստանում է զ նախդիրը, իսկ վերջում՝ ը որոշիչ հոգը: Օրինակ՝ իս գուդիմ զհուցը, զբանէրը, իսաղուղը—Սա ուտում եմ հացը, պանիրը, խաղողը:

Բացառականը կազմվում է երկու ձևով՝ պարզ և վերլուծական, առաջինի հոլովին է «ին», որը միշին հայերենի «էն» է: Օրինակ՝ պանին գուկում—աշխատանքից եմ գալիս. ձառին ինդուվ—ծառից ընկավ և այլն:

Երկրորդ ձևը կազմվում է սեռականի վրա ավելացվելով անձնական դերանվան երրորդ դեմքի բացառականը՝ յըրմինը< յիրմէն: Օրինակ՝ մարը աշգընիրէն յըրմինը շուդ խազ գինէ—մայրը աղջիկներից շատ է ախորժում: Աս դըղինիրէն յըրմինը չա գուգիս—Այս տղաներից ինչ ես ուզում: Էմ ախպըրդուցը յըրմինը զադօյիմ իս—Եղբայրներիցս ես բաժան եմ և այլն:

Առկա է նաև վերլուծական մի ուրիշ ձև:

Սեռականի վրա՝ դրվում է «մընէ» (Հաջիհաբիրլիի խոսվածքով), «մընի» (Յողան-Օլուկի): Օրինակ՝ Դադէն մընէ գու վախնօ—հորից վախենում է. Դագէն մընի գէու վախնու—հորից վախենում է:

Բացառականի վերլուծական ձևը հատուկ է շնչավորների համար:

Հարաբերական կամ հարցական դերանունների բացառականը նույնպես կազմվում է վերլուծական ձևով: Այսպես, օրինակ՝ օմ—ում և մընէ կամ մընի բացառական հոլովակազմիչով. օմմընէ կամ օմմընի առիրգէ կամ առիրզը—ուսից առար զայն:

Հավանական է, որ սա այլափոխված ձևն է գրաբարի անորոշ գերանվան բացառականին՝ յումեմնէ>օմմընէ:

Գործիական հոլովը Հաջի-Հաբիրլիի խոսվածքում ունի «ում» հոլովակազմիչը, իսկ Յողուն-Օլուկի խոսվածքում՝ «ու»: Օրինակ՝ Բանէրը հացցում գիր—պանիրը հացով կեր. Բանարը հացցու գիր—պանիրը հացով կեր: Կիշիրում ճամփունք մըննէ—գիշերով ճամփա մի ելիր: Կիշիրու ճամփէ մըննի—գիշերով ճամփա մի ելիր:

Հաջի-Հաբիրլիի խոսվածքում «ում» հոլովակազմիչը առաջացել է գրաբարի «ամբ» հոլովից, որը միշին հայերենում դարձավ «օմ», այսինքն՝ «բ» հոլովակազմիչը ընկավ: Քանի որ բարբառումս ա-ն շնչոյի տակ փոխվում է ու-ի, ուրեմն, «ամբ»-ը ք-ի անկումով դարձել է «ում»: Իսկ Յողուն-Օլուկի խոսվածքը պահել է գրաբարի գործիական «ու» հոլովակազմիչը:

Ներգոյական հոլովը թեպետ բացակայում է Սվեդիայի բարբառում, բայց իմաստային առումով առկա է, ի կամ յ նախդիրը դրվելով ուղղականի առաջ՝ տալիս է ներգոյականի իմաստ: Օրինակ՝ քու դուղը ի դօն դօ—հայրդ տանն է: Դօղը յիսդրվունը գօ—ուղեղը (ծուծը) ոսկորենում է: յմուսաղիմ շուզ գիդիցաք գօ—Երուսաղեմում շատ եկեղեցի կա և այլն:

Նույնն է նաև գրաբարում՝ ի քաղաք, յոսկերք, յԵրուսաղէմ և այլն:

Թվականների ուսումնասիրությունը երևան է հանում հետևյալ երևույթը. ձայնավոր հիմունով սկսվող պարզ թվականները երբ բառարարդման են ենթարկվում, այսինքն կազմությամբ դառնում են բարդ կամ բաղադրյալ, բառամիջում ստանում են վ հնչյունը: Օրինակ՝ 12—դըսվրըգօր կամ դըսվըգաք, 13—գըսվրըր կամ դըսվըրք, 18—դըսնըվօթր կամ դըսնըվաթ, 19—դըսնըվէներ կամ դըսնըվաններ և այլն:

Այս վ հնչյունը առաջացել է հետևյալ կերպով. ձայնավորից առաջ ու-ն արտասանվում է վ, օրինակ՝ նուէր>նըվէր, առուակ>առվակ, զինուոր>զինվոր և այլն: Քանի որ բարդ թվականները կազմվում են նաև ու շաղկապով՝ տասնութերկու, տասնութերեք, տասնութը, տասնու-ինն, պարզ է ուրեմն ու-ն պիտի դառնար վ:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ավեղիայի բարբառն ունի որոշ առանձնահատկություններ նաև դերանուններում: Թվենք կարևորագույնները միայն: Յուրական դերանուններ՝ այսպես, այդպես, այնպես-ի փոխարեն՝ աւենեք՝ տրրգաւ, տրրգադ, տրրգան: Նաև՝ տրրղսո—սրա պես, տրրղդիգո—դրա պես, տրրը-գինո—նրա պես կամ տրրըզսու, տրրըզիդու, տրրըզինու:

Դերանուններից առաջ դրվել է տրրըզ կամ տրրզ բառը: Հետաքրքիր է իմանալ, որտեղից է առաջացել այս բառը: Գրաբարում տարազ նշանակում է կերպ, ձև, հետևաբար նաև պես, տեսակ: Ուրեմն տարազ բառը հնչյունափոխվելով դարձել է տրրըզ—տրրզ, որը գրվելով ցուցական դերանունների առաջ, կազմել է տրրզաս—այսպես, տրրզադ—այդպես, տրրզան—այնպես և այլն:

Տրրըզ կամ տրրզ բառը շատ է գործածական նաև, որպես համեմատական, գոյականների հետ. օրինակ՝ տրրըզ մուրթ—մարդու նման, տրրըզ ասլան—առյուծի նման, տրրըզ շօն—շան նման և այլն: Նաև անձնական դերանունների հետ՝ տրրզէս—ինձ նման, տրրըզմէ—մեզ նման, տրրըզքէ—քեզ նման, տրրըզծէ—ծեզ նման, տրրզէնք—իր նման, տրրըզիինք—իրենց նման:

Հարցական «ինչ» դերանվան դիմաց չա, հոլովվելիս՝ չվա—ինչու, չվէն համուր—ինչու համար, զչա—զինչ, զչան—զինչը, չըվում—ինչով: Յողուն-Օլուկի խոսվածքում տարբերվում է տրականը՝ ըչայը—ինչին և գործիականը չըվու—ինչով:

Հարցական «յո՞» դերանունը Հաջի-Հաբիրիի խոսվածքում մնացել է համարյա նույնությամբ, միայն բմայնացած հնչյունով՝ յօ՞, իսկ Յողուն-Օլուկի խոսվածքում՝ յաո՞:

Ուշագրավ է հարցական ո՞ւր դերանվան բացատրականի կազմությունը, այսպես՝ յըմմուր—որտեղից. այս բառը կազմվել է երկու հարցական դերանուններով՝ յըմ՞մը—ե՞րբ և ո՞ւր<տ՞ւր կապակցությամբ. յըմմուր գուրուս—որտեղից ես գալիս: Յիմմուր^օ ղըղուրզէ—որտեղից գտար այն (զայն):

Բ Ա Յ

Ավեղիայի բարբառն ունի չորս խոնարհում գրաբարի չորս լծորդությունների հիման վրա՝ ել, իլ, ալ, ուլ և սրանց երկրորդ տիպարները՝ անել, անիլ, անալ և նույն Սույն չորս լծորդության պատկանող բայերը պարզվելով՝ վերածվել են մի լծորդության՝ իլ. այսպես, օրինակ՝ Ա. լծորդություն՝ սիրել սիրիլ—տեսանել ղիսնիլ:

Բ. լծորդություն՝ խօսիլ խուսիլ—ծնանիլ ձընանիլ:

Գ. լծորդություն՝ խուզալ խաղիլ—կակղանալ զաղըղնիլ:

Դ. լծորդություն՝ թողուլ թուղիլ—զարթնուլ զարթնիլ:

Թեպետ չորս լծորդության պատկանող բոլոր բայերն էլ պարզվելով դառնում են իլ, այս-ինքն՝ երկրորդ լծորդության, բայց խոնարհման ժամանակ պահպանում են իրենց գրաբարյան խոնարհման համակարգը: Օրինակ՝

Ա. լծորդության պատկանող բայերը՝ «իմ» խոնարհման

Բ. լծորդության պատկանող բայերը՝ «եմ» խոնարհման

Գ. լծորդության պատկանող բայերը՝ «ում» խոնարհման

Դ. լծորդության պատկանող բայերը՝ «օմ» խոնարհման

Զգալի տարբերություն կա Հաջի-Հաբիրիի և Յողուն-Օլուկի խոսվածքներում, առավել ևս քայերի խոնարհման մեջ. վերջնենք նախ և առաջ օժանդակ բայի խոնարհումը:

Հաջի-Հաբիբի

Յողուն-Օլուկ

Սահմանական եղանակ

Ներկա

իս իմ—մինք ինք

իս ըմ—մընք ընք

տօն իս—տօք իք

տառն իս—տաք ըք

ան է—անունք ին

ան ի—անընք ըն

Անցյալի անկառա

իս էրէ—մինք էրինք

իս ար—մընք այրընք

տօն էրիս—տօք էրիք

տառն էր—տաք այրըք

ան իր—անունք էրին

ան ըր—անընք այրըն

Յողուն-Օլուկի խոսվածքը անցյալ անկատարի համար, միայն եզակի թվի, ունի երեք ձև.

իս այրըմ, իս ըրար, իս ըրայրըմ.

տառն այրըս, տառն ըրէր, տառն ըրէյրըս.

Ծրրորդ դեմքը ունի միայն մի ձև՝ ան ըր:

Սահմանական եղանակի ներկա, անցյալ անկատար ժամանակները կազմությանը պարզ են, ինչպես անցյալի կատարյալը: Ունեն որպես խոնարհիչ գու-կու, այսինքն՝ կա:

Առաջին խոնարհման պատկանող բայերի ներկան կազմվում է՝ բայարմատի վրա ավելանում է օժանդակ բայի ներկան՝ իմ, ի, է, ինք, իք, ին. Յողուն-Օլուկի խոսվածքում եզակի երրորդ դեմքի վերջավորությունը դառնում է ի: Օրինակ՝

Հաջի-Հաբիբի

Յողուն-Օլուկ

գու սիրիմ—գու սիրինք

գէու սիրիմ—գէու սիրինք

գու սիրիս—գու սիրիք

գէու սիրիս—գէու սիրիք

գու սիրէ—գու սիրին

գէու սիրի—գէու սիրին

Ծրրորդ խոնարհման պատկանող բայերի ներկան կազմվում է՝ բայարմատի վրա ավելացվելով՝ եմ, ես, ա, ենք, ար-էք, են. օրինակ՝

գու խուսեմ—գու խուսենք

գէու խուսեմ—գէու խուսենք

գու խուսես—գու խուսար

գէու խուսես—գէու խուսէք

գու խուսա—գու խուսեն

գէու խուսա—գէու խուսեն

Ծրրորդ խոնարհման պատկանող բայերի ներկան կազմվում է բայարմատի վրա ավելացվելով՝ ում, ուս, օ-ու, ունք, ար-ուք, ուն: Օրինակ՝

գու խաղում—գու խաղունք

գէու խաղում—գէու խաղունք

գու խաղուս—գու խաղար

գէու խաղուս—գէու խաղուք

գու խաղօ—գու խաղուն

գէու խաղու—գէու խաղուն

Զորրորդ խոնարհման պատկանող բայերի ներկան կազմվում է՝

Հաջի-Հաբիբի խոսվածքում, բայարմատի վրա՝ օմ, օս, օ, օնք, ար, օն,

Յողուն-Օլուկի խոսվածքում՝ ամ, ուս, ու, անք, ար, ան: Օրինակ՝

գու թուղօմ—գու թուղօնք

գէու թուղամ—գէու թուղանք

գու թուղօս—գու թուղար

գէու թուղուս—գէու թուղար

գու թուղօ—գու թուղօն

գէու թուղու—գէու թուղան

Չորրորդ խոնարհման պատկանող բայերում կան զարտուղություններ, այսպես, օրինակ՝ զենուլ բայը և երկրորդ տիպարի ռնուլ վերջավորությամբ բայերը խոնարհվում են առաջին լծորդության պատկանող բայերի նման. օրինակ՝ գու զրնիմ, գու զրնիս, գու զրնէ և այլն:

Անցյալի անկատարը կազմվում է բայարմատի վրա ավելացնելով՝ օժանդակ բայի անցյալի անկատարը նույնությամբ և բոլորի համար: Օրինակ՝

Ա. գու սիր էրէ—գու սիր էրինք	գէու սիր ար—գէու սիր այրըք
գու սիր էրիս—գու սիր էրիք	գէու սիրէր—գէու սիր այրըք
գու սիր իր—գու սիր էրին	գէու սիր ըր—գէու սիր այրըն
Բ. գու խուս էրէ—գու խուս էրինք	գէու խուսար—գէու խուսայրընք
գու խուսէրիս—գու խուսէրիք	գէու խուսէր—գէու խուսայրըք
գու խուսիր—գու խուսէրին	գէու խուս ըր—գէու խուսայրըն
Գ. գու խաղէրէ—գու խաղէրինք	գէու խաղար—գէու խաղայրընք
գու խաղէրիս—գու խաղէրիք	գէու խաղէր—գէու խաղայրըք
գու խաղիր—գու խաղէրին	գէու խաղըր—գէու խաղայրըն
Դ. գու թուղէրէ—գու թուղէրինք	գէու թուղար—գէու թուղայրընք
գու թուղէրիս—գու թուղէրիք	գէու թուղէր—գէու թուղայրըք
գու թուղիր—գու թուղէրին	գէու թուղըր—գէու թուղայրըն

Անցյալ կատարյալի կազմությունը զգալիորեն տարբերվում է. երկու խոսվածքներում ևս ցոյական է, բացառությամբ չորրորդ խոնարհման բայերից: Հաջի-Հաբիբի խոսվածքը այս վերջինի համար ունի երկու ձև՝ արմատական և ցոյական, իսկ Յոզուն-Ուուկը՝ արմատական: ձևը միայն եզակի թվի համար.

Ա. սիրիցա—սիրիցունք	սիրիցամ—սիրիցունք
սիրիցիր—սիրիցաք	սիրիցեր—սիրիցաք
սիրից—սիրիցեն	սիրից—սիրիցան
Բ. խուսիցո—խուսիցունք	խուսիցամ—խուսիցունք
խուսիցուր—խուսիցաք	խուսիցար—խուսիցէք
խուսիցուվ—խուսիցուն	խուսիցու—խուսիցուն
Գ. խաղցա—խաղցունք	խաղցում—խաղցունք
խաղցուր—խաղցաք	խաղցուր—խաղցաք
խաղուց—խաղցուն	խաղուց—խաղցուն
Դ. թուղա—թուղունք	թուղամ—թուղիցունք
թուղիր—թուղաք	թուղիր—թուղիցաք
իթող—թուղեն	ի թաուղ—թուղիցեն
Երկրորդ ձևը՝	
թուղիցա—թուղիցունք	
թուղիցիր—թուղիցաք	
ի թող—թուղիցեն	

Եթե անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքում բայը միավանկ է, ապա ղրվում է ի նախդիրը, ինչպես գրաբարում է ստանում ե. (ե, ի). օրինակ՝

իբութ—իբըք գրաբարում՝ եպաք
 իթօզ—իթաուղ գրաբարում՝ եթող
 իպիր—իպիր գրաբարում՝ երեր
 իլուց—իլուց գրաբարում՝ ելաց

իզօց—իզաուց զրաբարում՝ ևզիտ

իտէր—իտէր զրաբարում՝ ևզեր

իզօր—իզուր զրաբարում՝ ևտուր

իթօք—իթաք զրաբարում՝ ևթուք և ալլն:

Բայց թե ինչու՞ն է (եկաւ) դառնում է իզիք—իզըք, այսինքն՝ վերջում ստանում է ք հնչյունը, որը հատուկ է հոգնակի առաջին և երկրորդ զեմքերին: Օրինակ՝

իզունք<եկանք, իդաք<եկայք—եկաք, չկարողացանք պարզել:

Առնել (անել) և ասել բայերի անցյալ կատարյալն ունի որոշ առանձնահատկություն: Այսպիսի

իրա—իրունք—իրա—իրենք

իրիր—իրաք—իրիր—իրէք

լրօց—իրեն—իրօց—իրեն

ացա—ացունք—ացա—ացընք

ացիր—ացաք—ացիր—ացէք

ասուց—ացեն—ասուց—ացեն

Շատ ուշագրավ երևույթ է նաև սոսկածանցավոր բայերի հրամայականը և արգելականը. օրինակ՝

զտանել—դօց—մը ղըննօ, ղըդիք—մը ղըննաք

ելանել—իլ—մըննէ, իլիք—մըննիք

մտանել—մօտ—մըմըննէ, մըդիք—մըմըզնաք

եզանիլ—իդէ—մըննօ, իդիք—մըննաք

լուանալ—ըլվուց—մըլվանօ, ըլվացիք—մըլվանաք

կարենալ—զարցէ—մըզարնօ, զարցիք—մըզարնաք

զիրանալ—կիրցէ—մը կիրնօ, զիրցիք—մը զիրնաք

առնել—իրօ—միենէ, իրիք—միենիք

լնուլ—լէց—մըլըլլօ, լըցցիք—մը լըլլաք

ունենալ—ունցէ—մունըննօ, ունցիք

ունանցէ—մունաննօ ունանցիք—մունըննաք

ունցի—մունըննու

Հինիլ և Էլանել բայերի անորոշ զերբայները ձևով նույնն են՝ ընելիլ, բայց խոնարհման համակարգում իրարից տարբերվում են. առաջինը՝ լինիլ, պատկանում է երրորդ խոնարհմանը՝ եռմա-ին, օրինակ՝ ներկան

զուննում, զուննուս, զուննօ—զուննու

զուննունք, զուննաք, զուննուն

նրամայականը՝ իդէ—իդի, իդիք—իդէք

արգելականը՝ մըննօ—մըննու, մըննաք—մըննէք:

Երկրորդը՝ ելանել, թիմս խոնարհման.

զուննիմ (Էլնում ևմ)—զուննինք (Էլնում ենք)

զուննիս (Էլնում ևս)—զուննիք (Էլնում եք)

զուննէ (Էլնում է)—զուննին (Էլնում են)

Հարկադրական եղանակի խոնարհիչը բըր-ն է, հավանաբար պէտ-որ բառերի միաձուլումով՝ դարձել է բըր (պէտ-ից ընկիլ է ղէտս-ը, պ>բ—որ>ըր=բըր):

Բայի խոնարհման ժխտական ձևում ևս նկատվում են որոշ տարբերություններ, ներկայի և անցյալ անկատարի ժխտական ձևերը կազմվում են շչուս և շչուս ժխտականներով. օրինակ՝

Հաօի-Հաբիրլի

Յողուն-Օլուկ

Ներկա

չու կրիմ—չու կրիթ
չու կրիս—չու կրիթ
չու կրե—չու կրին

չէու կրիմ—չէու կրենթ
չէու կրիս—չէու կրեթ
չէու կրի—չէու կրեն

Անցյալի անկատար

չու կրերէ—չու կրերինթ
չու կրէրիս—չու կրէրիթ
չու կրիր—չու կրիրին

չէու կրար կամ չէու կրայրմ
չէու կրէր կամ չէու կրայրես
չէու կրիր և այլն:

Ըղձականի ժխտականը կազմվում է միայն չ ժխտականով. օրինակ՝
չկրիմ—չկրինթ—չկրիմ—չկրենթ
չկրիս—չկրիթ—չկրիս—չկրեթ
թըղ չկրէ—չկրին—թըղ չկրի—չկրին

Երրորդ դեմքերը ստանում են թըղ<թող խոնարհիչը, թեպետ թողուլ բայի հրամայականի հնչյունափոխված ձևն է, բայց բարբառումս չունի նույն իմաստը, որովհետև թողուլ բայի հրամայականը լինում է թօղ—մը՝ թուղո, թաուղ—մը՝ թուզու:

Սույն բայի երրորդ դեմքի ժխտականը (ըղձական եղանակ) լինում է՝ թըղ չթուղո—թը՛ղ չթուզու:

Պայմանականի ժխտականը տարբերվում է Այն կազմում է հետևյալ կերպ. նախ դրվում է օժանդակ բայի ժխտականը (հնչյունափոխված ձևով անշուշտ) և ապա ըղձական դերբայը, իսկ երրորդ դեմքը ստանում է դարձյալ «թըղ» խոնարհիչը. օրինակ՝

չըմ կրէ—չընթ կրէ, չըմ կրի—չընթ կրի
չըս կրէ—չըթ կրէ, չըզ կրի—չըթ կրի
թըղ չը կրէ—չըն կրէ, թըղ չը կրի—չըն կրի
Հաչի-Հաբիրլիի խոսվածքում գործածվում է նաև հետևյալը՝
չըմ կրէ (եզակի) չըր կրինթ (հոգնակի)
չըս կրէ չըր կրիթ
— չըս կրին

Այս դեպքում էլ օժանդակ բայի ժխտական ձևը հանդես է գալիս երրորդ դեմքով միայն. չէր չըր:

Սոսկածանցավոր բայերի ժխտական ձևում նկատվում է որոշ տարբերակություն պայմանական եղանակում. վերջնենթ, որպես օրինակ, կարենալ բայը.

չըմ գարէ կամ չըր գարնօ, չըր գարինթ կամ չըր գարնունթ

չըր գարէ կամ չըր գարնօ, չըր գարիթ կամ չըր գարնաթ

չը գարի կամ չը գարնուր, չըր գարին կամ չըր գարնուն

Յողուն-Օլուկի խոսվածքում ունի յուրահատուկ ձև.

չըմ գար չընթ գար փոխանակ չընթ գարի

չըզ գար չըթ գար փոխանակ չըթ գարի

չը գարնուր չըն գար փոխանակ չըն գարի

Գրաբարյան նախդիրների կիրառումը

Սվնդիայի բարբառում գործում են գրաբարյան գ, ի, յ (ը) և ընդ նախդիրները. սրանք ստանում են ձևաբանական իմաստ և ոչ միայն գործ են ածվում գոյականների և դերանունների հետ, այլև բայերի և նույնիսկ դաշնում են հետադիր: Տվյալ դեպքում սույն հետադիրները ստանում են խոսքի մասի իմաստ. այսինքն՝ դերանուն, մակբայ, Օրինակ՝ զ նախդիրը ունի ետադաս կիրառություն.

Բս դիսօզէ կամ դիսուզը—ես այն կամ նրան տեսա:

Իս դիրօզէ կամ գիրուզը—ես այն կերա:

զրգոզը—ես այն գտա կամ՝ նրան գտա:
 քիշտիցազը—ես այն կամ նրան խփեցի:
 կրիցազը—ես այն գրեցի:

հանիցազը—ես այն կամ նրան հանեցի:
 գինչիցազը—ես նրան կանչեցի:
 խմցըցազը—ես այն խմեցրի ե այլն, և այլն:

Մեր համոզումով բայավերջի այս կտաղաս զ-ն եղել է նախապես զայն կամ զնա, որ հենչունափոխվելով դարձել է զէն, զան, զինօ, հետագայում ան, էն, ինօ արմատները ընկել են, թողնելով սակայն իրենց իմաստը զ նախդիրին և քանի որ զ-ն անշեշտ է, միացել է բային: Եթե այս երևույթը քննենք շարահյուսորեն, կտեսնենք, որ մի բառում կա և՛ ենթական, և՛ ստորոգյալը, և՛ լրացումը. օրինակ՝ խզիսօզը—ես նրան տեսա:

Այս երևույթը առկա է նաև մի շարք լեզուներում՝ վրացերենում, ղիսուկերենում, գերմաներենում և այլն: Օրինակ, վրացերեն զաղ-սո-մի-ծեր-էր-ին-առ նշանակում է՝ նա ինձ համար արտադրել տվեց և այս ամբողջ բառը կազմված է ծեր (զրը) արմատից և 7 մասնիկից⁵:

2 նախդիրի կիրառումը շատ է տարածված և այն էլ ոչ միայն հայցական հոլովի հետ, այլև՝ տարբեր հոլովների հետ: Օրինակ, սեռականով՝

զիշշօն ակէն զրդրից—իշու պոշը կարեց:
 զաղպուրը պիծէնր առուով—կղոր բաժինը առավ:

զթաղթէն շարշէն իւվիցօ—թաղաթի շուկան ման եկա:

Բացառական հոլովը միայն դերանվան հետ՝

յըրմինը առուծիս քէ դվա—իրենից վերցրածս քեզ տվեցի:

զրսսուր մընէ խազ շունիմ—սրանից շեմ ախորժում:

Գործիականով՝

զիսդում արըրչնիրը ձախից—ոսկիով ապարանջանները ծախեց:

զասիդում դարուծիս շհավնիցուով—ասեղով կարածս շհավանեց և այլն:

Դերանվան հետ շատ է գործածական, երբ այն հատկացուցիչ է, օրինակ՝

զմիր դօնը կիպի՛ս—մեր տունը գիտե՛ս:

զէմ ազպարը ասկար դարէն—իմ եղբորը զինվոր տարան:

մինք զմիր հավուզը չը գուրսիցունք—մենք մեր հավատը չկորցրեցինք:

զինչից զէր դղաքը քուվը—կանչեց տղաքը իր մոտ:

Ի նախդիրը նմանապես շատ է գործածական և՛ որպես նախադաս, և՛ կտաղաս:

Որպես նախդիր, նա ունի հետևյալ իմաստները.

1. ուղղություն՝ Թայ ի վիր իշէ—զեպի վեր նայիր, Թայ ի դօն գուրթում—զեպի տուն եմ գնում, Թայ ի տաս արէ—զեպի այս կողմը արի. իտան կնօ—այն կողմ գնա. Թայ ի վար իճէ—զեպի վար իջիր և այլն:

2. Տեղ. քու մարը ի դօ՛ն գո—քո մայրը տա՛նն է:

Ան ի ժում կնուց—նա եկեղեցի գնաց:

Ի վիր մընուց—վերը մնաց:

Ի գուր կացա—իզուր գնացի (պարապ տեղը գնացի):

Յոգուն-Օլուկի խոսվածքում ի նախդիրը դառնում է հետադրություն, տալով բառին տեղի իմաստ (մակրայ). օրինակ՝

Միր դղան զվարժաղէուն շուզ գը սիրի, ամմըն սարահտան ուխտու գըննի, գու շուվզէյի—մեր տղան զպրոցը շատ է սիրում, ամեն առավոտ կանուխ է ելնում և այնտեղ վազում է (այսինքն շտապում է):

Դերանվան իմաստ: Օրինակ՝ տասդրդէյիս դաու, զծառս բըր սըրպէյմի՛ն:—Քաշկինակս տուր, ձեռքս պիտի սրեմ զրաճով:

5 Գ ու ղ ե ն Ս և ա կ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 148:

6 Այս և նախորդ օրինակը վերցրել ենք Տիգրան Անդրեասյանի «Քիստինիկի բարբառը» ձեռագիր մենագրությունից, որի խմբագրությունը հանձնարարված էր մեզ՝ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից:

Յ նախդիրը գործածվում է ի նախդիրի փոխարեն, երբ բառը սկսվում է ձայնավորով: Օրինակ՝ յես իշէ—ինձ նայիր, յանտէն անգէ—անդին (մյուս կողմը) անցիր. յըսքէ յիպըր գը

մուղզընօ, փախէ—երբ քեզ կմոտենա, փախիր:

Յ նախդիրը, մի քիչ հնչյունափոխված ձևով՝ յը, կիրառվում է ետադաս: Որինակ՝

կացա իշիցայը—գնացի, նայեցի ևրաս:

մուղզըցօ կամ մուղզըցու դիրօյը—մոտեցա, դիպա նրան:

Չարզըգիցօյը կամ շարզըգիցումյը—ես նրանով հիացա:

Իլվիցօ կամ իլվիցում իշացայը—դարձա, նայեցի նրան:

Բս իւօյը կամ իւումյը—ես այնտեղ բարձրացա (մակբայ):

Իս ինգօյը կամ ինգայմը—ես այնտեղ ընկա (մակբայ):

Ընդ նախդիրը գործածվում է բառամիջում, բառակազմության դեպքում, ունենք քիչ օրինակներ.

գարրնդղազ—կապ ընդ տակ, նշանակում է քարե աստիճան, սանդուղք:

մօթընգմօթ—մութ ընդ մութ, նշանակում է շատ մութ, խավար:

քօնընգքօն—քուն ընդ քուն, այսինքն՝ քնաթաթախ և այլն.

Անշուշտ, սրանով չի ավարտվում Սվեդիայի բարբառի ձևաբանական առանձնահատկությունների նկարագրիր:

Սույն հոդվածով մենք ջանացինք այն տալ համառոտակի:

А. А. Пашаян

МОРФОЛОГИЯ СВЕДИЙСКОГО ДИАЛЕКТА

Р е з ю м е

Будучи одним из самых трудных для понимания, сведийский диалект содержит множество элементов, присущих древнеармянскому языку. Естественно, что он имеет множество особенностей.

Представляет большой интерес изучение склонения и числа имен существительных, этимология указательных местоимений, особенности спряжения глаголов. Специальный интерес представляют двойственное и множественное число существительных, многообразие частиц, образующих множественное число в сведийском диалекте.

Изучение данного диалекта может в определенной мере способствовать объяснению некоторых вопросов истории армянского языка.